

ՀՈԳԻՍ ՏԱՃԱՐ Է

Հոգիս տաճար է. ազնիւ իղձերի
Շողարձակ ջահ է իմ սիրտն այնտեղ,
Եւ յոյզերն իմ նման մոմերի՝
Առկայծում են հեզ, արցունեով բիւրեղ.

Հոգիս տաճար է. մտքիս բուրվառից
Միւս խնկարկում է կնորուկը կեանքի,
Եւ խիղճս՝ ներմակ զգնատով անբիծ,
Այնտեղ ամեն ժամ կանգնած աղօթքի՝:

Հոգիս տաճար է. աչքներս բախծալից
Լուսամուտներն իր՝ աշխարհի դիմաց,
Նրանց խոհական, անչար փեղկերից
Ո՛չ մեկ յանցաւոր ստեր չե՛ սահած:

Հոգիս տաճար է. եւ կամքս նրա
Գմբերն է կայուն ու երկնասլաց.
Քանի ապրում եմ այս երկրի վրայ՝
Արե՛ւ, իմ ռենքը միւս կա՛յ քո դիմաց:

ՎԱՌԱՐԱՆԻ ՄԷԶ

Վառարանի մէջ կրակը մեղմ կը վառի,
Անյոյս սիրոյ տայտանքի նման անբուն,
Կը բորբոքի, կը կայծկլտայ ու կը հալի,
Անբուժելի վերքի նման համր ու տրտում.

Փայտերն կապոյց բոց կարձակեն տրտունջի պէս,
Ու ծուխ կը տան, հառաջանքի նման անզօր,
Յնտոյ ցալից իրար կուտեն վիշապի պէս,
Վիշապի պէս հրամարմին ու թեւառո...

Ու կը վառի կրակն այնտեղ, վերքի նման
Կը կրսկծայ, կը մորմոնքի ու կը հալի,
Քանի՛ դպրար ծառեր այնտեղ կը մոխրանան,
Որքա՛ն տրտունջ կը մեռնին խո՛ւլ, անլսելի...

ԾԵՐ ԿԱՂՆԻՆ

Այս մեծ ճամբի վրայ, մենաւոր ու տրում
Ահա մի ծերացած, մի հին կաղնի,
Տարիների դիմաց, ժամանակի մուժում
Որպէս մի պատմաբան հնամենի:

Խոլարն ու դաժան ձմեռներ են իշել
Կենիոներով ծածկած իր նիւղերին,
Ու գարուններ, ժայռուններ են ծաղկել,
Նոր ոսեր են փրթել իր ուսերին.

Քարւաններ են անցել կարօս մի զով տուքի,
Տարիների նման ծանր ու հանդար,
Ու բողել են այնտեղ յոգնութիւն ու փռչի,
Կեսանքի վհատ խօսեն ու խուլ զանգաւ:

Եւ անցել են, անցել ժամանակ ու ճամբորդ,
Այս մեծ ճանապարհից անցել անհետ,
Մնացել է որպէս մի յիշատակ աղօս՝
Մենաւոր այս ծառը իր տուքի հետ:

Ու պիտի զան նորեն, պիտի զան ու անցնեն
Դեռ ճամբորդներ դադրած ու յոգնաբեկ,
Պիտի նստեն մի պահ ու վերստին անցնեն,
Ժամանակի հանդեպ համր ու անգետ:

Այս մեծ ճամբի վրայ, մենաւոր ու տրում
Ահա մի ծերացած, մի հին կաղնի,
Տարիների դիմաց, ժամանակի մուժում
Որպէս մի պատմաբան հնամենի:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ülker İnporu

Նրանք խաղում եին ծաղկած բնութեան մէջ,
Երկու մանուկ եին՝ նրկու զառնուկ գարնան.
Նրանց մատաղ հոգում կեանքի կրակն անչէջ
Բոցկլտում եր, ծնում շարժում, եռանդ ու կեանք,

Բայց կանգ առան...տեսան' յանկարծ խաղի կեսին՝
Արտուրիկն էր ճախրում իրենց զլխավերեն.
— Ինչո՞ւ թե չունենք... — մեկեն նրանք ասին, —
Այս, ի՞նչ լաւ է ճախրել, բռչել հոդից վերեւ...

Ու պոկում են ահա, դալար ոսերն ուսու,
Նշանց սրտում մանկան ծաղկում է վառ երազ,
Պիտի հիւսեն թեւե՛ր, բռչեն հեռո՛ւ, հեռո՛ւ,
Մինչեւ երկինքը լուրք, մինչեւ արեն անհայս,

Նրանք հիւսում եին... ճախրում երկինքներում,
Երկու մանուկ եին, երկու տատրակ զարնան,
Զինջ աչքերում երանց խինդն էր բոցավառում,
Մանկութիւնն էր երգում յաւերծ երանութեան...

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Իմ յութերի հետ հիմա ես մենակ,
Եկել, տցում եմ այս հին քաղաքում.
Առջեւս են ելնում հողէ պատի տակ
Դեմքեր, որ բնաւ ինձ չեն ճանաչում...

Բայց ես նայում եմ երանց կարօսով,
Ինչպէս ծեր մայրը որդուն է նայում,
Եւ ինձ թռում է մի ձայն հոգերով,
Այս փակ փողոցում սիրս է հմայում:

Եւ ինձ թռում է, որ այդ փողոցի
Յատակին ցցւած մեծ քարն է խօսում.
— Անցո՞րդ, — ասում է, — քեզ ճանաչեցի,
Ոտքիդ վերից էլ արիւն չի՝ հոսում...

Չե՞, երեկ եր այն, երբ խենթ թռիչքով
Անցար, ոտքիդ տակ առանց նայելու,
Անցար սուրալով, ինչպէս անսանձ հով,
Երկիր ու երկինք մեկեն տիրելու...

Յանկարծ դեմ առաւ ոտիկդ իմ լանջին,
Փոքրիկ մարմնովդ փունցիր գետին,
Ասես, հիմա ել, դեռ իմ ականջին
Հնչում է ցափ լացդ դառնագին: —

Նայում եմ քարին, յիշում եմ մեկ-մեկ
Անցած օրերն իմ լաւ մանկութեան,
Խաղընկերներս, զլխաբաց, բոքիկ,
Մայր ու դրացի... որ հիմի չկան...

Որ հիմի արդեն դարձել են անհաս,
Դարձել են կարօ՞ս, յուշ ու յիշատակ,
Ժամանակի մէջ տաղւած մի երազ՝
Եկել, պահւել են այս չոր քարի տակ:

Ու կռանում եմ փնտռելու կրկին
Քարի տակ պահւած դեմքերն սիրասուն...
Բայց... դեմ է առնում քարը իմ կրծքին,
Այս անգամ արիւնն սրտից է հոսում:

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Երբ չեմ լինի ես, աւխարհը նորից
Գարնան դօղանջով կաղմկէ, կեռայ...
Կանցնես, ո՞վ անցորդ, իմ ժիրմի մօսից,
Կը կարդաս մամոնտ սնւ քարի վրայ՝
«Հեռու հայրենի արևից, հողից,
Կարօսի երգը որբերիս մեռայ»...

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉՈՎԼ

Գերանդին ուրախ զնզաց դաւտերում,
Հայրենի՛ երկիր, ողջո՞յն քո բնորդին.
Ողջո՞յն քո երգին, ստեղծող ձեռքին,
Լիութեան ոսկին փունց դաւտերում:

Հասուն հասկըն է խինդով մահանում,
Օ՛, բնորդի արտեր, ձեզ հազա՞ր համբոյր,
Օրհնութիւնով բի՞ւր եւ արեւաբոյր
Հասկն է ոսկեհուր այնտեղ մահանում.

Եւ լեռնանում է ցորենի ոսկին,
Անխո՞նչ մեակներ, ձեր հետքն նմ լսում.
Շողշողուն լոյսում ձեր սիրտն է յուզում
Ցոյզերով հասուն ցորենի ոսկին:

Գերանդին ուրախ զըրբնզաց դաւտում,
Զնզաց իմ սիրտն էլ երգիս դօղանջով,
Կարօտի կանչով, ա՞հ խորունկ տենչով
Լինեի ես էլ հայրենի դաւտում...

Լինեի՛ ես էլ հայրենի դաւտում
Անչար ու ճնրմակ իմ ծերութեան հետ,
Օ՛, երանաւէս ննջեի յաւէս
Անդորր ու խաղաղ հայրենի դաւտում:

ԱՇԽԱՆ ՔԱՄԻՆ

Աւեան քամին՝ մի ցնորուն անտուն աղջիկ,
Աչերն ամպոս, դեմքը գունաս, վարսերն արձակ,
Ցնցուն մէջ դողդողալով, ուսաբորիկ,
Երեկ զիւեր հեծեծում եր ծառերի տակ,

Երեկ զիւեր սաղարթներն ու աւեան քամին
իմ ականջին կեանքի տրտում խօսեր ասին,
Ունկադրեցին ափսոսանքի իմ հառաջին
Ու խառնեցին ցուրտ արցունքներ իմ խուլ լացին,

Երեկ զիւեր աւեան քամին իմ սնարին
Փուց թեւերն իր մտերիմ ու կարօսի,
Քննութ գգւեց, ինձ համբուրեց աւեան քամին...

ԲԱՂՋԱՆՔ

Աննինջ կարօտով, յոգնած ու վհաս,
Սնւանայ ափին կանգնեի մի օր,
Ու մեղմիւ ձայնով պատմեի հանդարտ
Սիրուն Սնւանին ցաւերն իմ բոլոր։

Փոեի կապոյս, ծփո՛ւն շրերին
Երգերն իմ անխառն յոյզերով զեղուն,
Սնւանայ ժայռերն ինձ ունկնդրեին,
Ինձ անդորր տային իրենց սուներում։

Ու լիճը նուար սիրոյ յոյզերով,
Վարարէր Զանգուն սրտիս անձրեւից,
Հողը ոռոգւեր կարօխս ցողով,
Ծա՛ն, ծի՛լ ու ծաղիկ ողջունեին ինձ։